տիք քահանային՝ չկարենալով ծածկել իր հակակղերական զգացումը՝ որ ուրիշ տեղեր և ուրիշ վէպերու մէջ ալ երբեմն արտայայտած է։ Ահա տողերը՝ որոնցմով կը վերջացնէ իր «Դաւիթ բէկ»ը.

«Տէր Աւետիքը՝ այդ անպարտելի հերոսը, տեսնելով հայոց անմիաբանութիւնը, թողեց Հայաստանը և դիմեց Երուսաղէմ։ Այնտեղ նա Աբրահամ կաթողիկոսի հաճութեամբ ներումն ստացաւ պատրիարգից այն բոլոր արիւնների համար, որ նա թափել էր։ Կրօնական մոլեռանդութիւնը վերջապէս տիրում է այդ քաջի սրտին, նա սկսում է ապաշխարել». և կը ժանօթագրէ «Ծիծաղելին այն է, որ հայր Զամիչը, որը սիրում է իւր պատմութեան մէջ շատ հայկական երեւոյթներ կաթոլիկութեան ստուերի մէջ ծրարել, այդ – մոլեռանդ Մխիթարեանը խիստ ոգեւորութեամբ խօսելով Տէր Աւետիքի վերջին վարմունքի մասին, նրան փոխանակ Երուսաղէմ, Հռոմ է ուղարկում պապից թողութիւն խնդրելու իր մեղքերի համար»։

Հարկ կա՞յ ըսել թէ մոլեռանդութիւնը ո՞ւր է։ Զամչեանի պէս գիտնական և ազգասէր Մխիթարեան մը բացարձակապէս չէր կրնար կեղծել. չէ՞ որ ան հիմնապէս կաղապարուած Մխիթար Աբրահօր գործադրած և կտակած անսխալ սկզբունքով՝ գիտէր զանազանել ազգը կրօնքէն և երբեք չզոհել մէկը միւսին։

Վստահ ենք թէ անաչառ և ուղղամիտ ընթերցողներուն համար առաւելօրն պիտի բաւեն Մխիթարեան հնագոյն կրկին ձեռագիրներու և Զամչեանի պատկառելի հեղինակութիւնները՝ հաստատելու համար հակառակ Գուլամիրեանի և մանաւանդ Բաֆֆիի ծանր զրպարտութեան՝ թէ արդարեւ Աւետիք քահանայ Հռոմ գացած է և ոչ թէ Երուսաղէմ։

Սակայն կ՚ախորժինք մէջ բերել նոր վկայութիւն մը որ յինքեան ծանրակշիռ է և հիմնապէս կը մերկացնէ Գուլամիրեանի ազրիւր – ձեռագրին մէջ կատարուած կեղծիքը։

Հետաքրքրական վկայութիւնը մեզի կուտայ Արսէն Վ. Ղլղճեան (այժմ արքեպս.) «Արարատ» թերթին մէջ «Նիւթեր Դաւիթ բէկի պատմութեան վերաբերեալ[1]» յօդուածով։ Ղլղճեան կըսէ.

«Մայր Աթոռի Մատենադարանի թ. 450 (գ. ց. նոր գրչութիւն) կանոնագիրքը պարունակում է իր մէջ՝ ձեռագրի վերջում «Պատմութիւն ինչ անցից ի Սիւնիսն յետնոց» 74 քառածալ երես ընդամենը։ Պատմութեան սկզբից պակասում է 20 երես[2]։ Աւելորդ է կանգ առնել պատմութեան բովանդակութեան վրա եւն»։

Յետոյ կ՚ըսէ թէ ան նոյնն է Գուլամիրեանի հրատարակութեան հետ, աւելցընելով թէ.

«Ձեռագիրը արտագրուած է եղել, կ՚ըսէ, 1759 թուից առաջ գրուած օրինակից։ Արտագրել է «Զմիւռին» քաղաքում Դանիէլ գրչի ձեռքով. իսկ առաջին յիշատակարանն աւարտուել է 1759 թ. յունուարի 20ին «Ամսթելրօդամ» քաղաքում։

Մայր Աթոռի ձեռագիրն արտագրութիւն է Զմիւռնիայում արտագրուած օրինակի։ Արտագրողն է Եսայի Աւագեան, որ ընդ-օրինակել է 1847 թ. ս. Էջմիածնում։ Սածս ձեռագրի մէջ ամենահետաքրքրական մասը, որով նա էապէս տարբերւում է Գուլամիրեանի հրատարակած «Դաւիթ բէկ»ի պատմութիւնից, վերաբերում է Դաւիթ բէկի զօրականներից՝ Տէր Աւետիքին»։

Ապա յիշելով թէ Զամչեան Հռոմ կը ղրկէ Աւետիքը կ՚ակնարկէ Գուլամիրեանի զարմանքին և տարակուսանքին և կ՚աւելցնէ.

«Եւ իրօք մինչեւ օրս էլ տարակուսելի և չստուգուած էր մնում այն հանգամանքը, թէ ճի՞շտ է որ Տէր Աւետիքը դիմած լինի Հռոմի քահանայապետի ներողամտութեան։

Մեր ձեռագիրը, որ արտագրուած է Դաւիթ բէկի մահուանից 31 տարի յետոյ, ուրեմն ժամանակակից մարդու ձեռքով, ասում է. էլ չենք ասում, որ պատմութիւնը ինքը գրուած է ժամանակակցի ձեռքով։ Բերենք ձեռագրի յիշատակարանից կտորներ։

Բայց զտէր Աւետիսն փաշայն եթող ի Հալիձոր, իբրեւ նոքա չուեցին անտի, այլ

1. 1905, Ապրիլ, էջ 382–387։

2. Մեզ որ այս ձեռագիրն ալ տարաբախտութեան հանդիպած է իր սկզբնաւորութեամբ, ուր անշուշտ հեղինակին անունը պիտի տեսնէինք (Հ. Ղուկասին),